

Վահրամ Մավեանին Պենոն Սեւանէն

Սիրելի Վահրամ,

Այսօրուան հաւաքոյթը, որ նուիրուած է քու անժամանակ կորուստիդ 25ամեակին, յստակօրէն կու գայ ապացուցելու այն գերագոյն յարգանքէն, սերէն, գմայլանքէն ու երախտագիտական զգացումներէն զոր քու վաղեմի աշակերտներդ, բարեկամներդ եւ քու իւրայատուկ գրելաճոճ ընթերցողներդ կը տածեն քու անձիդ հանդէպ: Իրողութիւնն այն է, որ դուն երբէք հեռանալով մեզ չլքեցիր, այլ քու այդ ջերմ հոգիդ մնաց մեզմէ իւրաքանչիւրիս հոգիներուն մէջ միշտ կենդանի:

Դուն մեզի համար լոկ ուսուցիչ մը չէիր դասարանին մէջ, որ կը դիտեր ետին գետեղուած ժամացոյցը գիտնալու համար թէ երբ պիտի աւարտի դասապահը: Դուն քու հոգիիդ մէջ պահուած ունեւոր հրկիզող առաքելութիւնն մը, մեզ դաստիարակելու նոյնիսկ դասապահէն դուրս:

Դուն մեզի համար եղար իսկական մտատիպար մը, ինչպէս նաեւ մեզմէ իւրաքանչիւրին համար ակնածանք պարտադրող խորհրդատու, սրտամօտ բարեկամ, մեր զարգացման անսացող ինձամող հոգի, մեր կրթադաստիարակական հետամուտ ուսուցիչ:

Քու հարագատ եւ վարակիչ խանդավառութեամբդ մեզմէ իւրաքանչիւրին հոգիներուն մէջ սերմանեցիր սեր՝ Հայ լեզուն ու գրականութեան հանդէպ, Հայ երաժշտութեան ու մշակոյթին հանդէպ, եւ քաջալեր հանդիսացար բոլոր անոնց, որոնց մէջ նշմարեցիր գրելու տաղանդ. եւ անոնք՝ քու քաջալերանքիդ անալով, գրեցին կարճ պատմութեանքներ, եւ ստեղծագործեցին բանաստեղծութիւններ: Քու հարագատ ներշնչանքովդ մեզ մղեցիր խորաթափանց կերպով վերլուծելու Հայ գրականութիւնը եւ մագնիսացուցիր մեզ քու անձնական բանաստեղծութիւններովդ, յատկապէս այն կարճ պատմութեանքներովդ, որոնք կը նուիրէիր աշխարհի չորս ծագերուն գոնուող հայու բեկորներուն:

Յիրաւի, մե՛զի համար, ինձի՛ համար նաեւ, իւրայատուկ առանձնաշնորհում մըն էր, ինչպէս նաեւ բիւրեղացած երջանկութիւն, միանալով քեզի, ընթերցել հայկական բանաստեղծութիւնն եւ երգել այնպիսի հայկական երգեր, որոնք կը փխելն Կոմիտասի ակունքներէն:

Արդարեւ, կարելի է անվարան ըսել, թէ դուն մեզմէ կերտեցիր մաքրամաքուր հայեր, խիզախ հայրենասէրներ՝ ամբողջովին նուիրուած Մայր Հայրենիքին: Հայրենասիրութեան կողքին, երբէք չզլացար սերմանելու համար մեր մէջ յարգանք ու գնահատանք հանդէպ օտար գրականութեան, երաժշտութեան ու մշակոյթին:

Մենք, քու երախտաւոր աշակերտներդ, անցեալին, ներկայիս եւ յաւեւ կը խոնարհիմք քու վաստակիդ առաջ եւ կը յայտնենք մեր երախտագիտական բիւր զգացումները, որ առանձնաշնորհումը ունեցած ենք քեզ ճանչցած ըլլալու եւ բոլոր այն թանկագին մարդկային, հոգեկան եւ բարոյական, կրթական նպաստը որ ունեցած ես մեր մարդակերտումի աշխատանքին մէջ, բայց նաեւ այն պատրաստակամութիւնը զոր ներարեցիր մեր հոգիներուն մէջ, դիմագրաւելու համար բոլոր մարտահրաւերները, զոր կը սպասէին մեզ նոյնիսկ Մելգոնեանէն անդին:

Պենոն Սեւան

27 Յունուար



Վահրամ Մավեան

ԱՆԴԵՆԱԿԱՆԻՆ ՄԷՋՆ ԱԼ ՀԱՅ ԿԱՅՅ

Արդէն իսկ 25 տարիներ թաւայեցան այն օրէն, երբ վաստակաւոր ուսուցիչը, հանրածանօթ գործիչը, օրագրողը, պատմագիրը, վկայագրողը, թարգմանիչն ու բանաստեղծը՝ Վահրամ Մավեան, իր առաջին հայեացքը անդենականներն յառեց դէպի այս անցողակի աշխարհը:

1926ին, Երուսաղէմի մէջ, զէթունցի օճախին մէջ ծնունդ առած Վահրամը, իր կենքի առաջին եօթ տարիները անցընել էր Յայֆայի մէջ, կ'անցնի Երուսաղէմ, աշակերտելու համար Շնորհք Պատրիարքին:

1948ին, Վահրամ կը ժամանէ Կիպրոս, պաշտօնավարելու համար Ազգային Մէլիքեան վարժարանին մէջ, որմէ ետք հրաւեր կը ստանայ պաշտօնավարելու Մելգոնեան Կրթական Հաստատութենէ:

Երանելի է այն ուսուցիչը, որ իր աշակերտներուն հոգիներուն խորը կը թողու այնպիսի պայծառ դրոշմ, որ անոնք՝ իրենց կենքի բոլոր ուղիներուն վրայ յաճախ կը յիշեն, նաեւ կը փնտռեն անոր հետքերը:

Սիւաւասիկ Մավեան կը դառնար այնպիսին, երբ 1950 թուականին, հրաւեր կը ստանար պաշտօնավարելու Մելգոնեան Կրթական Հաստատութենէ ներս դառնալու համար շառաւիղը Օշականէն ու Թէքեանէն անցնելով անոնց յոյս ճամբէն: Աշակերտներ կը գրէին իր մասին. «Գիտեր աշակերտները կապել դասին՝ Հայ Գրականութեան, խանդավառել զանոնք Հայ գրողներով եւ անոնց քայլերը առաջնորդել գրողարան: Կը սիրենք զինք, որովհետեւ մա՛րդ էր: ՄԿ Հաստատութենէ ներս գրական ու գեղարուեստական երեկոներուն զխաւոր կազմակերպիչն ու մղիչ ուժն էր: Վ.Գոյոյեան (Վ. Մավեան էջ 152)»

Արդարեւ, հազուագիտ երեւոյթ կարելի է նկատել, երբ աշակերտներ կը ներքեցնեն իրենց ուսուցիչին մշակած գրականութիւնը: Վահրամին գրութիւնները կը յափշտակուէին անոնց կողմէ, որովհետեւ ինք ու իր ստեղծագործութիւնները այնքան ընդելուզուած էին իրարու, որ կարելի չէր անջատել իրարմէ: Ան համամարդկային գրականութիւն կը մշակէր, ապրած պահերը կրկին ապրեցնելով ամենապարզ ու բիւրեղացած պատմութեանքներով: Սփիւռքահայ գրականութեան մէջ իր արձակը ունի ուրոյն դիմագիծ. ան վիպասան մը չէր, սակայն իւրաքանչիւր պատմութեանք իրմէ՝ վիպերգութիւն կը բուրդեր եւ ընթերցողին հոգեկան աշխարհին ապրող էակներ կը դառնային իր կերպարները:

1958ին Մավեան կը մեկնի Իրլանտա՝ «Քուինզ» Համալսարանի մէջ ուսանելու «Մարդկային Գիտութիւններ»: Ճիւղ մը, որ որքա՛ն կը զուգորդուէր իր նկարագրին ու հոգեմտաւոր աշխարհին: 1961ին, շրջանաւարտ ըլլալէ ետք, կը վերադառնայ Կիպրոս՝ դասաւանդելու համար Մելգոնեան Կրթական Հաստատութենէ ներս:

1963ին, իր կենքի ամբողջական լիութեան մէջ, ան կը նշանակուի Կիւպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքի պաշտօնակատար ու կը հաստատուի Լիզպոն: Հերթական այցելութիւններով կը ծանօթանայ Հայկական Սփիւռքին՝ Սուրիոյ, Լիբանանի, Իրաքի, Եգիպտոսի, Իրանի...: Իր երթը կը շարունակէ Արեւմտեան Եւրոպայէն մինչեւ հեռաւոր Ամերիկա: Եւ ահա, ծնունդ կու տայ իր գլուխ գործոցին՝ «Հայու Բեկորներ»ուն ու «Ամէն Տեղ Հայ Կայ» հատորներուն:

Այնուամենայնիւ, այսօր երբ յետադարձ ակնարկ մը կը նետենք իր կենքի ու վաստակի 54 տարիներուն վրայ, կը գտնենք զինք այնչա՛փ հարուստ, ոչ միայն իր մշակած ստեղծագործութիւններով, այլ իր հաստատած բարեկամութիւններով, գաղափարախօսականով, անյիշաչար ոգիով, աշակերտներուն հետ ստեղծած մարդկային զգացումներով, ընկերային ըմբռնումներով ու ազգային արժէքներու հանդէպ իր տածած վե՛հ գիտակցութեամբ:

Իր նուաճումներուն մաս կը կազմեն նաեւ սփիւռքահայ վաւերագրութիւնը հարստացնող իր էջերը, որոնք այնքան նրբօրէն քանակուած մնացին սփիւռքահայ պատմութեան մէջ իր «Յամբեցող Վերադարձ»ով, «Անկապ Օրագիր»ով, եւ «Ամէն Տեղ Հայ Կայ» հատորներով:

Եւ Այդպիսին ան մնաց մե՛ր, ի՞ր աշակերտներուն եւ բարեկամներուն հոգեմտաւոր աշխարհին ու մանկավարժական պատմութեան մէջ:

Վստահ ենք նաեւ որ, անդենականին մէջ ակզամ, ան կը շարունակէ որոնել հայու հետքեր...:

Պայծիկ Գալայճեան